

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

INTRODUCTION

Սույն ժողովածուն պարունակում է ՀՀ աշխատաշուկայի վերաբերյալ ամփոփ վիճակագրական ցուցանիշների ժամանակագրական շարքեր՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ (նաև՝ ճշգրտված), որոնք կարող են լուսաբանել ոլորտի փոփոխությունները վերջին հինգ տարում:

Ընդհանուր առմամբ տեղեկատվությունը ներկայացված է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ ՀՀ մարզերի, գյուղ-քաղաք կտրվածքով, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական տարբեր բնութագրերով:

Ժողովածուն հիմնական ցուցանիշների վերաբերյալ ներառում է նաև համառոտ մեթոդաբանական պարզաբանումներ, որոնք հիմնականում համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

Ժողովածուում աշխատաշուկայի զարգացումները ներկայացված են տարբեր աղբյուրներից ստացված ինտեգրացված տվյալների հիման վրա. օգտագործվել են ինչպես պետական վիճակագրական և գերատեսչական հաշվետվությունների, այնպես էլ առևտրային կազմակերպություններում և տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Ժողովածուն նախատեսված է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների, միջազգային, գիտական, գործարար շրջանների, տնտեսագիտական ԲՈՒՀ-երի ուսանողների, ասպիրանտների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի, վիճակագրական տեղեկատվության այլ սպառողների համար:

This handbook encompasses time series of summarized statistical indicators on the Armenian labour market on a monthly, quarterly and annual basis (also adjusted) describing the changes in this sector within the past 5 years.

In general, the information is presented in both nationwide and broken down by RA marzes, as well as by urban/rural, various demographic and socio-economic characteristics.

The brief methodological explanations on main indicators are provided in the handbook, which are mainly corresponding to the international standards.

Developments in a labour market presented in the handbook are based on the integrated data received from the different sources. References for the handbook were: results of the state statistical and administrative (departmental) reports, as well as findings from labour force sample surveys in a commercial enterprises and households.

The handbook is intended for state government and local self-government authorities, economic units, international, scientific and business cycles, students, post-graduates and teachers of economic universities, and other users of statistical information.